

ռաւներ : Ս ասն զի կրնային պատաս-
խան առնուլ թէ Պատճառը աս է որ
հիմա քիչ կայ ասանկ բաներու հաւտա-
ցող : Փափաքինք ու ջանանք ուրեմն որ

ամենեւին ալ չմնան ու վերնան ասոնց
հաւտացողներ , ան ատենը անշուշտ կը
վերնան նաև աչքիւղները :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Պոլիվար :

ԲՆԱՐՀԻՍ հռչակաւոր հայրենա-
սիրաց մէկն է Սպանիացի Պոլիվար Սի-
մոն՝ հարաւային Իմերիկոյ ազատարա-
րը , որ ծնած էր 1783^{էն} Վոլոմպիայի
Վարաքաս քաղաքը : Ինչիւ ու բարե-
բարոյ ծնողաց մէկ հատիկ որդի ըլլա-
լով , և պզտիկուց 'ի վեր աղէկ կըր-
թուած , Իմերիկայի ու Լաբոպայի ա-
նուանի համալսարաններուն մէջ յայտ-
նի ըրաւ իր կարգէ դուրս հանձարը :
Իմէն բանէ աւելի քաղաքական գիտու-
թեանց ետեւէ եղաւ , և անոնց մէջ
հմտանալու համար ճամբորդութիւն
մը ըրաւ Լաբոպա և Հիւսիսային Իմե-
րիկա , ու իր հայրենիքը դառնալուն
պէս՝ իր ազգատոհմին երկիրներուն
մէջ որչափ գերիներ որ կային ամէնն

ալ ազատ ըրաւ , ասով ինքն եղաւ ա
ռաջին բարի օրինակ տուողը իր հայ-
րենակցաց , որ հետեւին աս գովելի վեհ-
անձնութեանը :

Ինչ ատենները , այսինքն 1787^{էն} ին-
չուան 1811 , հարաւային Իմերիկոյ
բնակիչները Սպանիացւոց բռնութիւն-
ներէն ձանձրացած՝ սկսեր էին գլուխ
վերցընել և ինքնիշխանութեան ետեւէ
ըլլալ , բայց շատ անգամ յաղթուեր էին
անոնցմէ : Պոլիվար չդիմացաւ իր հայ-
րենեացը ոտնակոխ ըլլալուն . զօրավար
եղաւ Սպանիացւոց դէմ՝ որոնց ըրած
անգթութիւններուն չափ չկար , ու խիստ
շատ պատերազմներու մէջ քիչ զօրքով
յաղթեց չարաչար Սպանիացի զօրա-
վարներուն և ազատեց Ս Էնէցուէլա

ըստած երկիրը 1814^{ին}, և անատենէն ըստեցաւ աշխարհը¹ : Սպանիոյ տէրութիւնը 1815^{ին} յիսուն կտոր նաւ խրկեց Միւրիկացոց դէմ, որով իր զօրավարները շատ զօրացան, և ապրտամբները կէս մը յաղթուեցան՝ կէս մըն ալ թուլցան տկարացան ու ցրուեցան . բայց քաջն Պոլիվար կարծես թէ աւելի սիրտ առած՝ մեծամեծ յաղթութիւններ ըրաւ շատ անգամ . 1818^{ին} մէկ օրուան մէջ 20,000 Սպանիացի ջարդուեցաւ, ու անկէ ետքը Սէնէյուէլան հասարակապետութիւն եղաւ բոլորովին անկախ Սպանիայէն, իոր իրանատա ըստած երկիրն ալ միացաւ Սէնէյուէլային հետ . երկուքը մէկէն ըստեցան Հասարակապետութիւն Վոլմպիոյ, և Պոլիվար անոր գլուխ անուանեցաւ : Երկու տարիէն ետքը ուզեց հրաժարիլ իշխանութենէն՝ ըսելով թէ « Ինչի կ'ուզեմ քաջ ու հաւատարիմ զինուոր ըլլալ քան թէ իշխանապետ », . բայց երբոր տեսաւ թէ իր հայրենիքը վտանգի մէջ է, նորէն յանձն առաւ սպարապետութեան պաշտօնը ինչուան հինգ տարի, և ան միջոցին ալ զարմանալի յաղթութիւններ ըրաւ, որոնց վերջինն ու ամենէն փառաւորը եղաւ 1824^{ին} դեկտ . 9^{ին} : Իսկ 1825^{ին} Փետրուի հասարակապետութիւնը մեծ ժողով մը ընել տալով՝ հրաժարեցաւ իշխանութենէն ու դարձաւ Վոլումպիա . հոն իր հայրենակիցքը ուզեցին իրեն համար արձան մը կանգնել, ինքը թող չտուաւ . « Սպասեցէք, ըսաւ, ինչուան որ մեռնիմ, որպէս զի կարենաք առանց ակնառութեան դատաստան ընել իմ ըրածներուս վրայ և ըստ այնմ պատշաճ երեւցած պատիւներն ընել ինծի . քանի որ մէկը կենդանի է՝ արձան մի կանգնէք իրեն . վասն զի կրնայ փոխուիլ ու մատնել զձեզ . ես այնպիսիներէն պիտի չըլլամ, բայց նորէն կ'ըսեմ, սպասեցէք » :

(Ժ) Կէպէտ շատը այսպիսի իրաւացի երախտագիտութեամբ կը պատուէին ու

կը սիրէին իրենց ազատարարը, բայց որովհետեւ ճշմարիտ հայրենասիրաց ու առաքինեաց տրուած է փառքէն աւելի նեղութիւն ու հալածանք քաշել շատ անգամ, Պոլիվարին ալ թշնամիներ չպակսեցան որ զինքը մեռցնել կ'ուզէին, ու երկու իրեք անգամ գրեթէ հրաշտի կերպով ազատեցաւ անոնց ձեռքէն :

Սեմուէլ խոհական խորհրդով մտածեց Պոլիվար որ Միւրիկայի ինքնիշխանութիւնը աւելի հաստատէ . աս բանիս համար ընդհանուր ազգաց ժողով մը ըրաւ Փանամայի պարանոցին (Լ)աքուպայա քաղաքը, որպէս զի բոլոր հարաւային Միւրիկոյ բնակիչները իրարու հետ միաբան ու դաշնակից ըլլան . և սակայն իր թշնամիները սկսան զինքը զրպարտել՝ ըսելով թէ Պոլիվարին միտքը ամենուն վրայ տիրապետել է . ուստի 1830^{ին} բոլորովին հրաժարեցաւ իշխանապետութենէն, ու միայն Վոլումպիայի զօրաց սպարապետ ըստելու անունը պահեց : Ինչ ատենէն ան պաշտօնէն ալ հրաժարեցաւ, ու միտքը դրաւ որ Եւրոպա քաջուի : Դժգային ժողովը իմանալուն պէս՝ ջանաց որ Պոլիվարը նորէն նախագահ ըլլայ, բայց տեսնելով որ անիկայ յանձն պիտի չառնու, անուանեց զինքը առաջին քաղաքացի Վոլումպիոյ, և տարեկան թուշակ կապեց իրեն 30,000 տողար, որ է գրեթէ 155,000 ֆռանք, և հրաման տուաւ որ ուր որ կ'ուզէ բնակի :

Երբ տարւոյն վերջերը, այսինքն դեկտեմբերի 17^{ին} մեռաւ Պոլիվար (Սանթա-Սարթա քաղաքին քովը իր գիւղազնացութեան տունը, և իր կարճ կեանքովը ամբողջ մեծ աշխարհքի մը մշտնջենաւոր ազատութեան և կենդանութեան հիմը դրաւ . իր մեծանձնութեանն ու հայրենասիրութեանը զօհ եղաւ, բայց իր կենացը վերջի վայրկէսին մէջ ալ սրտին անպատմելի մխիթարութիւնն ան էր որ անցած զնացած դիպուածները քանի որ միտքը բերէր՝ անոնց մէջ բան մը չէր տեսներ որ իրեն փառացը՝ քաջութեանը՝ և անշահասէր

¹ Սպ . Libertador.

հայրենասիրութեանը պտուղն ու ար-
դիւնքը չեղենային վրան :

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յաղագս իսկապէս և նախադասութեամբ շին-
նալի գրոյն Ղապասարանի Սիւնիստի
Ղազար :

ՊԱՏՈՒԱԿԱՆԱԳՐՈՅՆՔ ինձ 'ի նախ-
նեացն յիշատակս և 'ի թանգարանի
հոռութիւնս այնոքիկ, ոյք զձեռին ճար-
տարի բերեն զկնիք երկասիրութեան,
և այնքան ևս ընտիրք՝ որքան ձեռնն
ճարտարագոյն և վաստակն տաժանա-
կան և մանր, և գործն ազնիւ : Եւ զի-
տանայ և ոչ ոք՝ քանի մեծարանս և գին
ընծայեն հանդիսարանք հոռութեանց՝
դրամոց նախնեաց, և ականց պատուա-
կանաց և դրոշմագիծ քարանց և այլոց
սոցին նմանեաց . ընդ որս դասակցեալ
և ձեռնագիր մատենանք, մանաւանդ
մագաղաթեայքն, ոչ նուաստագոյն ինչ
աթոռ ունին 'ի հնահոյլ կաճառուն .
նա մանաւանդ պատուականութեամբ
աննիւթականն սոփերացն զոր յին-
քեանս պարփակեն՝ զբազմոք զայլովք
նիւթովք կամ թէ զյոլովիւք իսկ գե-
րազանցեն . և թէ ոչ այս այսպէս ճա-
նաչի յամենեցուն՝ տպագրութեանն ար-
դասիք է կարծիսդ, որ զբնագրացն
բազմացունելով զօրինակս՝ զառան-
ձնակութեան նոցին խորել թուի ըզ-
փառս : Վերագոյնք 'ի գրաւոր հոռ-
ութիւնս՝ կամ հոյակապ արանց երկասի-
րութիւնքն են, կամ սակաւագիւտ գը-
րուած, կամ կարի քաջ հին, կամ ճար-
տարագիծ գրչութիւն, կամ քաջանշան
առն ձեռաց վաստակ, որ վեհ քան
զայլն է . և քան զսա վեհագոյն՝ թէ
իցէ մատեան իսկագիր կամ նախագա-
ղափար բանիցն հեղինակի, որ քանոն
և ուղղիչ կարգի հանուրց առ 'ի նմանե-
փոխանցելոց օրինակաց :

Եւ իցեն այսպիսեացս մատենից ժան-
գահար հոռութիւնք տիգրանեան դրա-

մոց, չիցեն ականախտիղն պաղպաղմունք
թագազարդ գոհարաց, և ոչ ճոխու-
թիւնք և պէսպիսութիւնք անօթոց ոս-
կեղինաց և արծաթեղինաց, և ոչ վսե-
մական արհաւիրք զինուց, կամ տիեզե-
րասաստ գաւազանաց փառք . այլ մտա-
ւորականն շնորհիւ քաջ 'ի բաց զարբու-
նական յիշատակօքն անդր անցանեն .
քանզի նոքա զմեծագարմիցն զանուն և
զժամանակ միայն կրեն, այլ զվաստակ
ասպարդիւն կամ սինքթոր՝ կամ թերևս
և չարաշուք մարդկան . իսկ սոքա զվե-
հագունից 'ի մարդիկ, զիմաստնոց ա-
սեմարանց, և զձեռին վաստակ և զմը-
տաց ծնունդ՝ անընդմիջաբար բարձեալ
բերեն : Եւ զնունդք արդարեւ վեհագունք,
և դժուարինք յերկունս, որպէս զի բա-
զում անգամ ծնողացն՝ որպէս մարց ո-
մանց կենսազրաւս լինել, արտադրեալք
անթերի կամ թերակազմ յանմահու-
թիւն անուանց այնոցիկ՝ յորոց ինքեանք
անմահ կառուցան արձանք յերկրի :
Ոքա են անձուկ ասպարէզք մեծամեծ
նահատակութեանց մտաց վերացելոց .
յոր ժամն ձիգս ծանրանալով կարկա-
ռեալ զղէմն անքթիթս՝ բոյսս իմաստից
սերմանէին 'ի դաշտն սպիտակս, մինչ-
դեռ սիրտ և գլուխ միաբանք տարժա-
նէին և ոգիք հեղինակին քաղէին, յու-
նիցն կամար միալուծ շէշտեալ 'ի վեր և
ճակատն ակօսաձև ամփոփեալ իջեալ 'ի
կցուածս նոցին, և ամենայն զօրութիւն
խելապատակին թուէր սեղմել անդր
հաւաքել . եղէգն դանդաչկոտ յաջում
վայրահակ նկատելով՝ մերթ որպէս ե-
րիվար հմուտ սուրայր 'ի վսեմական
ասպարիզին, և մերթ տաժանաքայլ
հազիւ հազիւ ճոնչելով յառաջէր . ա-
հեակն հարեալ ընդ ճակատն՝ թուէր
իմն մալել զկարծրութիւն ամանոյ ուղ-
ղոյն և ծննդաբերս գործել . մինչդեռ
և քիրտն ջերմաջերմ ընդ սեւադեղոյն
արբուցանէր զտոմնս : Եւ ուր ուրեմն
'ի վեր առեալ հեղինակին զգլուխն
գտանէր զմեծ ժամն աւուրն կարճա-
տեալ և անսովոր երագութեամբ սլա-
ցեալ . բայց նա առաւել ընդ վաստակն
իւր՝ մնայուն խնդացեալ քան ընդ ժա-